Էդգար Աղաբեկյան

ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի փորձագետ,

տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

ՀՀ արտարժույթի շուկայի «վայրիվերումները»

ՀՀ արտարժույթի շուկան պարբերաբար ցնցումների է ենթարկվում քաղաքական իրադարձությունների հետևանքով: Նման իրավիճակ էր 2020 թ. վերջին, երբ ավարտվեց Արցախյան 44-օրյա պատերազմը, այնուհետև՝ ռուս-ուկրաինական պատերազմի սկզբին, ինչպես նաև՝ 2022 թ. սեպտեմբերյան պատերազմական գործողությունների օրերին: Նման իրավիճակի հանգեցինք նաև 2023 թ. սեպտեմբերի 19-ից հետո, երբ Արցախում սկսված մարտական գործողությունները և դրանից հետո ձևավորված ներքաղաքական և արտաքին քաղաքական գործոնները ՀՀ-ում արտարժույթի շուկայի մասնակիցների շրջանում բացասական սպասումներ էին առաջացրել: Հետևանքը արտարժույթի նկատմամբ աճող պահանջարկն էր ու ամեն օր բարձրացող դոլար/դրամ փոխարժեքը: Ինչպես երևում էր բանկերի կողմից կատարված գործառնությունների ծավալներից, որոնք միջինում օրական մոտ 20 մլն ԱՄՆ դոլար և ավելի էին կազմում, ինչպես նաև բանկերի առք ու վաճառքի փոխարժեքների սպրեդներից, շուկայում անընդհատ աճող պահանջարկ կար: Ըստ էության, նման պահանջարկին բանկերն արձագանքում էին վաճառքի փոխարժեքի բարձրացմամբ, ընդ որում՝ բանկերի կողմից առքի փոխարժեքն ավելի դանդաղ էր աճում, քան վաճառքի փոխարժեքը, և սա այլ հավասար պայմաններում պետք է զսպեր շուկայում բացասական սպասումների հետևանքով խուճապի մատնված գնորդներին: Սակայն, խուճապն ավելի էր մեծանում, և շուկայի մասնակիցները փոխարժեքի ավելի բարձրացման սպասումներով շարունակում էին արտարժույթ գնել: Կարծում ենք, իրավիճակն այդքան չէր լարվի, եթե ՀՀ ԿԲ-ի կողմից շուկայում ավելի վաղ միջամտություն կատարվեր, ինչի օրինակը այսօր՝ 2023 թվականի հոկտեմբերի 4-ին, ԿԲ-ի միջամտությունից հետո փոխարժեքի կտրուկ անկումն է: Նման իրավիճակներում պետք է գիտակցել, որ խուճապահար ներդրողները երբեք չեն կարողանում օգտվել, և իրավիճակից օգտվում են միայն բանկերը, որոնք ունեն առք ու վաճառքի հստակ լայն սպրեդներ և գործառնությունների շրջանակում պարբերաբար փորձում են փակ պահել իրենց արտարժութային դիրքերը:



թ. հոկտեմբերի 4-ի դրությամբ ՀՀ ԿԲ փոխարժեքը 429.14 է, սակայն, ինչպես երևում է բանկերի առք ու վաճառքի փոխարժեքի նվազումից (ժամը 16:00-ի դրությամբ բանկերն արդեն դոլարը գնում էին 400 դրամով և վաճառքում մոտ 420 դրամով, մինչդեռ առավոտյան առքի փոխարժեքները որոշ բանկերում հասնում էին ժամանակ ականատես լինենք փոխարժեքի նվազման՝ մինչև շուկայում որոշակի հավասարակշռվածության ձևավորումը: